ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Վիեննա (Ավստրիա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Գրիգոր Հակոբյան - ՀՀ ՊԵԿ Զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության եկամուտների գնահատման և վերլուծության բաժնի գլխավոր հարկային տեսուչ (ժթ)

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա, սեպտեմբերի 10-ից 23-ը

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) Վիեննայի համատեղ ինստիտուտ (Joint Vienna Institute)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

«Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն (Fiscal Policy Analysis)» թեմայով դասընթացի նպատակն է ներկայացնել, թե ինչպես կարելի է ախտորոշել մակրոտնտեսական անհավասարակշռությունները և շտկել դրանք քաղաքականության համակարգված փաթեթի միջոցով: Այն ընդգրկում է չորս հիմնական մակրոտնտեսական հատվածների՝ իրական, հարկաբյուջետային, արտաքին և դրամավարկային հիմնական առանձնահատկությունները և դրանց փոխկապակցվածությունը:

Դասընթացը միտված է մասնակիցներին ներկայացնելու հարկաբյուջետային քաղաքականությունը կառավարության հիմնական նպատակներին հասնելու համար՝ մակրոկայունության, արդարության և արդյունավետության և կայուն երկարաժամկետ աճի տեսանկյունից, ինչպես նաև գնահատելու հարկային և ծախսային քաղաքականության հիմնական տարրերը:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ժամանակ քննարկվել են հետևյալ հարցերը՝

1) <u>*պետական ֆինանսներ և մակրոտնտեսություն.*</u>

Դասընթացի ընթացքում քննարկվել են հարկաբյուջետային քաղաքականության հիմունքների վերլուծությունները և դրանց դերը մակրոկայունության ապահովման գործում, երկարաժամկետ հեռանկարում հարկաբյուջետային քաղաքականության սահմանները և դրամավարկային քաղաքականության և հարկաբյուջետային քաղաքականության փոխազդեցությունները,

2) *ծախսային քաղաքականություն*.

Դասընթացի ընթացքում քննարկվել են պետական ներդրումների արդյունավետությունը և պետական ներդրումների և հարկաբյուջետային կայունությունը,

3) *հարկաբյուջետային կայունություն*.

Դասընթացի ընթացքում քննարկվել են հայեցակարգեր և գործիքներ դեֆիցիտի և պարտքի վերաբերյալ, պարտքի և դեֆիցիտի շեմերը,

4) *հարկաբյուջետային կանխատեսումներ*.

Դասընթացի ընթացքում քննարկվել են եկամուտների և ծախսերի տեխնիկան և մեթոդները,

5) *հարկաբյուջետային հաշիվներ և հարկաբյուջետային ագրեգատներ*.

Դասընթացի ընթացքում քննարկվել են պետական ֆինանսների վիճակագրության հիմունքները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում կազմակերպել են խմբային քննարկումներ՝ առաջադրված խնդիրների լուծման նպատակով: Մասնակիցներին տրվել են առաջադրանքներ, որոնք հաջողությամբ հաղթահարվել են դասընթացի շրջանակներում ձեռք բերված գիտելիքների և փորձի հիման վրա:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ իրականացվել են գործնական աշխատանքներ, մասնավորապես՝ իրականացվել է եկամուտների դինամիկայի վերլուծություն, արդյունավետ դրույքաչափերի գնահատում, նախօրոք ընտրված երկրի համար հարկերի էլաստիկության և դինամիկության գնահատում, ինչպես նաև ՀՆԱ-ում պետական պարտքի կանխատեսում՝ 2024-2028թթ համար:

Դասընթացի վերջում մասնակիցները բաժանվել են խմբերի, որոնց կողմից պատրաստվել են շնորհանդեսներ՝ Հայաստանի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ:

Դասընթացից առաջ և հետո մասնակիցները հանձնել են քննական թեստեր, իսկ վերջում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրվել են հավաստագրեր՝ «Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն (Fiscal Policy Analysis)» թեմայով դասընթացը հաջողությամբ ավարտելու մասին:

Գործուղման ծախսերը (ավիատոմս, կացություն, օրապահիկ) ապահովվել են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից:

7. Ստորագրությունը, ամսաթիվը

27. 09. 2023թ.